



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 4 « 29 » 03 2017 թ.

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով միջազգային համագործակցության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դոցենտ Ե.Ս.Սահակյանի «ԵՊԲՀ միջազգայնացման գործընթացը, կատարված աշխատանքները և հեռանկարները» վերնագրով զեկուցումը,

Որոշում է՝

1. ԵՊԲՀ միջազգային և արտաքին կապերի գործունեությունը գնահատել բավարար:
2. Հանձնարարել պրոռեկտոր, դոցենտ Ե.Ս.Սահակյանին մշակել և ներկայացնել.
 - 2.1 միջազգային համագործակցության և արտաքին կապերի համակողմանի զարգացման ծրագրի իրագործման մեխանիզմներն ու ժամանակացույցը,
 - 2.2 համալսարանի ամբիոնների և կառուցվածքային ստորաբաժանումների միջազգայնացման հաշվառման ենթակա գործունեության չափորոշիչները, հաշվետվությունների ներկայացման ձևաչափերն ու աշխատանքների արդյունավետության գնահատման մեթոդները:
3. Հանձնարարել պրոռեկտոր, դոցենտ Ե.Ս.Սահակյանին՝
 - 3.1 ապահովել համալսարանի մասնակցությունը եվրոպական համալսարանների ընկերակցության, տարածաշրջանի և օտարերկրյա առաջատար բուհերի կրթական, հետազոտական ծրագրերին՝ ներգրավելով արտաքին շահակիցներին,
 - 3.2 տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնել կրթական միջազգային շուկայի ուսումնասիրություն, ապահովել համալսարանի որակավորման ճանաչման գործընթացը օտարերկրյա պետություններում, ուսման ներգրավել օտարերկրյա քաղաքացի հանդիսացող ուսանողների,
 - 3.3 կազմել համագործակցության ծրագրեր արտերկրում գործող հայ բժիշկների և ԵՊԲՀ շրջանավարտների միությունների հետ: Նախապատրաստել համալսարանի 100 ամյակին ընդառաջ շրջանավարտների միավորման հարթակ, ստեղծել համապատասխան հաղորդակցության դաշտ և մշակել միջոցառումների ցանկ,
 - 3.4 համալսարանի կայքում ընդլայնել միջազգային գործունեության մասին տեղեկատվական դաշտը, պարբերաբար ներկայացնել ծրագրերի գործընթացը,
 - 3.5 գիտության գծով պրոռեկտոր պրոֆեսոր Կ.Բ.Ենկոյանի հետ համատեղ երկամսյա ժամկետում համալսարանի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել ռեյտինգային կազմակերպություններից մեկում՝ ընդունված չափորոշիչների համաձայն:
4. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆեսոր Լ.Ռ.Ավետիսյանի հետ համատեղ ներկայացնել օտար լեզուների իմացությունն ապահովող ծրագրեր:
5. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՍԻՍՏԱՆ
ԳՆՏՐԱՏՈՒՄ



Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Տ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ